Արձանագրության 4
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/79» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23.05.2019թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Զեյնալյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Արամյան /գնահատող/,
Վ. Մարտիրոսյան /բացող/, Ժ. Բալաբանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Վ. Զեյնալյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

1.2 «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/79» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/79» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների մասին

(Վ. Զեյնալյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/79» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

-1,6 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սմարթլայն» ՍՊԸ-ն

-2,7 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Մոդերն Դիլայթս» ՍՊԸ -ն

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Վ. Զեյնալյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը **գրասենյակային ապրանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Զեյնալյան

Անդամներ՝ ---------- Կ. Արամյան

---------- Վ. Մարտիրոսյան

---------- Ժ. Բալաբանյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան